

Ընդդիմախոսական կարծիք

Վարդուհի Աշոտի Բալոյանի՝ «19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (Անգլիալեզու թարգմանությունների նյութերի հիման վրա)» Ժ.01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսության ուսումնասիրության նյութը կարևորվում է մի քանի առումներով: Այն հնարավորություն է տալիս ձևակերպելու թարգմանական մանկագրության զարգացման օրինաչափությունները, հասկանալու, թե թարգմանական մանկագրությունն ինչ չափով և ինչպես է նպաստել հայ մանկագրության զարգացմանը՝ լինելով «հայ գրական մշակույթի անբաժանելի դրսևորում և միջմշակութային հաղորդակցության դաշտ», ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը (էջ 5):

Առհասարակ, հայ թարգմանական գրականությունը, 5-րդ դարից սկսած, դիտարկվում է իբրև հայ գրականության բաղկացուցիչ մաս: Այն հարստացրել է լեզուն, ձևավորել ընթերցողների աշխարհայացքը, դարձել հայ հասարակության սեփականությունը՝ նպաստելով հայկական ինքնություն մատենագրության առաջացմանը և զարգացմանը: Ինչպես գրում է «Հայ հին թարգմանական գրականություն» ուսումնասիրության հեղինակ Լ. Տեր-Պետրոսյանը՝ «Պատմամշակութային տեսակետից թարգմանական և ինքնուրույն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով դրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարաթեք կողմերը: Միջնադարում, ըստ էության, նրանց տարբերությունը բոլորովին չի գիտակցվել, և հայ ընթերցողի կողմից միևնույն պատվին են արժանացել ինչպես ազգային, այնպես և օտար հեղինակները: Դրա վկայությունն են հայկական բազմահազար ձեռագրերը, որոնցում ինքնուրույն և թարգմանական գործերը հանդես են գալիս կողք կողքի, առանց տարանջատման, և հազվադեպ կարելի է հանդիպել ձեռագիր ժողովածուների, որոնք կազմված լինեն

միայն հայ հեղինակների երկերից» (Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Ե., «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 6):

Հին գրականության մեջ առանձնացվում է հայ թարգմանական գրականության 5 շրջան (5-18 դարեր): 17-18-րդ դարերում, կապված գաղթավայրերի կենսունակության, հայ վաճառականների ծավալած գործունեության, տպագրական գործի զարգացման հետ, հայ ժողովուրդն առավել է հաղորդակից դառնում եվրոպական երկրների գիտական նվաճումներին: 18-րդ դարում Մխիթարյանները ծավալում են թարգմանական և ինքնուրույն ստեղծագործական գիտականորեն համակարգված գործունեություն: Վենետիկը, նաև Պոլիսը, ուր գործում են կաթոլիկ հայերը, Հայոց պատրիարքարանը, դառնում են կրթական-լուսավորական ծրագրեր իրականացնող խոշոր կենտրոններ: Թարգմանական հենքի վրա է ձևավորվում նաև արևելահայ գրականությունը: 18-րդ դարի 2-րդ կեսից նոր վերելք է ապրում հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը. անհրաժեշտ էին քաղաքական, սոցիալական, մշակութային զարգացումներն ուղենշող տեսություններ, հայոց հասարակական զարգացման ծրագրային դրույթներ, որոնք կարող էին մշակվել իրազեկվելով այլ ժողովուրդների պատմության փորձին: Եվ քանի որ ազգի հոգևոր, տնտեսական ու քաղաքական զարգացումը կապվում է գիտության, լուսավորության հետ, սկիզբ է առնում նաև երիտասարդ սերնդի դաստիարակության խնդիրը: Ակադ. Ս. Սարինյանը բանաձևում է այդ միտումը. «Հայ գաղափարաբանության մեջ որոշակի ուղղություն է ստանում հայի նոր կերպարի դիդակտիկան, կերպար, որ բարձր գիտակցականությունն ու բարոյական արժանավորությունը համատեղում է քաղաքացիական ու հայրենասիրական կոչման հետ»: Գիտնականը վկայակոչում է իտալացի գրող, հասարակական գործիչ Միլվիո Փելլիքոյի «Յաղագս մարդկային պարտուց» էսսեի թարգմանությունը, որը հայրենյաց պատանիներին առաքիլության ու երջանկության ճշմարիտ դասեր էր ուսուցանում (Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն, Ե., «Զանգակ-97» հրատ., 2005 էջ 32):

Այսպես, 19-րդ դարում առաջնահերթ պահանջներից մեկն է դառնում հայ թարգմանական մանկագրությունը, որպեսզի լրացվի ինքնուրույն գրականության բացը: Ատենախոսը քննում է նախախորհրդային շրջանի հայ թարգմանական

մանկագրությունը անգլիալեզու նյութերի թարգմանությունների հիման վրա՝ հաշվի առնելով նաև նյութի ծավալուն լինելը: Գնահատելի է, որ ատենախոսը հայ թարգմանական մանկագրությունը դիտարկում է իբրև հայ մանկական գրականության ինքնատիպ և կարևոր բաժին: «Գրական կապի պատմությունը,- գրում է հայ անգլիական գրական առնչությունների հետազոտող Վ. Փարթամյանը,- ինքնին ազգային գրականության պատմության մի բաղկացուցիչ մասն է, այդ գրականության ցուցաբերած լայն հետաքրքրությունների և ստեղծագործ որոնումների վավերականությունը: Այդպիսին է եղել այլ գրականությունների թվում և անգլիականի նկատմամբ վերաբերմունքը, որի հետ երկդարյա առնչությունը մաս է կազմում այն ամբողջականության, որ հայ գրականության պատմություն է կոչվում» (Փարթամյան Վ., Հայ-անգլիական գրական առնչությունները, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 6):

Ներկայացված ատենախոսության մեջ քննության ենթարկված նյութը հնարավորություն է տալիս վերականգնելու թարգմանական գրականության ընդհանուր շղթայի օղակներից մեկը: Անշուշտ, պատկերը շատ ավելի ամբողջական կլիներ, եթե ատենախոսին հասանելի լինեին քննվող պարբերականների հրատարակված բոլոր համարները, խնդիր, որ հետագայում լուծելի է:

Ատենախոսը նյութն ամփոփել է 4 զլուխներում: Առաջին զլխում համառոտ ներկայացվում է թարգմանական մանկագրության պատմությունը 18-19-րդ դարերում, ներկայացվում են այն աշխատությունները, որոնց շնորհիվ ձևակերպվել է «մանկություն» հասկացությունը, գեղարվեստական երկեր, որոնք դարձել են մանկական գրականության հիմնաքարեր: Կարևորվում է հայ թարգմանական հեքիաթն իր ունեցած նշանակությամբ, խոսվում է հայ ճանաչված գրողների կատարած թարգմանությունների միջնորդավորված բնույթի մասին: Ակնհայտ է, որ ատենախոսը կարողանում է կատարել տեսական ընդհանրացումներ և վերլուծություններն առաջ տանել թարգմանական մատնանշված սկզբունքների հետազոծով. 19-րդ դարում պահպանվել են բնագրի լեզվաոճական առանձնահատկությունները՝ այն դիտելով որպես մշակութային և բարոյական արժեքների պահպանման ձև, 20-րդ դարի 2-րդ կեսին ձևավորվել է նկարագրական կամ թիրախ մշակույթը կարևորելու մոտեցումը:

Երկրորդ գլխում ներկայացվում են հնդկահայ համայնքի ձևավորման մշակութային և կրթական առանձնահատկությունները, գրաստության զարգացման փուլերը, պարբերականների հասանելի համարներում տպագրված թարգմանական նյութերը, բերվում են թարգմանական գործընթացների վերաբերյալ արձարծված կարծիքներ: Տեսանելի է դառնում՝ ինչպես են անգլիական գործերը մուտք գործել հայ գրականություն: Հետագա ուսումնասիրությունների համար հենք կարող են դառնալ ատենախոսի կողմից կատարված պարզաբանումները, թե որտեղից են վերցվել բնագրերը, ովքեր են հեղինակները:

Երրորդ գլխում անդրադարձ է կատարվում արևմտահայ թարգմանական մանկագրության զարգացմանը: Առանձին ենթագլուխ է նվիրված Մխիթարյանների գործունեությանը և թարգմանական գրականություն ստեղծելու գործում նրանց ունեցած դերին, նրանց վարած լեզվական և թարգմանական քաղաքականությանը:

Գնահատելի է, որ ինչպես երկրորդ գլխում, այս գլխում ևս ատենախոսի տեսակետները հաճախ ձևավորվում են բնագիր և թարգմանական տեքստերի համադրման արդյունքում: Երբեմն միայն, չունենալով փաստական հենք, ապավինում է ենթադրությանը (էջ 57 «հնարավոր է», էջ 58 «ենթադրում ենք», էջ 62 «ամենայն հավանականությամբ»):

Անդրադառնալով պարբերականների նպատակներին, գաղափարական ուղղվածությանը՝ ատենախոսը, առկայության դեպքում, նկատում և առանձնացնում է կառուցվածքային նորարարությունները ևս, ինչպես, օրինակ, «Ծաղիկ մանկանց» պարբերականի պարագայում. պարբերականը տպագրել է նաև երեխաների դաստիարակության տեսական խնդիրներին վերաբերող հոդվածներ, տպագրել է զուգահեռ թարգմանություններ, ընդլայնել է համագործակցությունը աշխարհի տարբեր պարբերականների հայ թարգմանիչների և հրատարակիչների հետ: Մեկ այլ պարագայում ցույց են տրվում տարբեր պարբերականներում տպագրված տարբեր տեքստեր, որոնց թարգմանությունները կատարվել են նույն աղբյուրից (էջ 82):

Նույն մեթոդաբանությամբ է քննվում 4-րդ գլխի («Արևելահայ թարգմանական մանկագրության զարգացումը») նյութը: Երբեմն զուգահեռներ են անցկացվում արևելահայ և արևմտահայ մամուլների միջև, ընդգծվում է նրանց դերը լեզվի մշակման

հարցում, թեմատիկայի ընդլայնման ու արտահայտչական միջոցների հարստացման գործում, վեր են հանվում այն առանցքային ազդակները, որոնք պարբերականը ցանկացել է փոխանցել իր երիտասարդ ընթերցողներին:

Ատենախոսության մեջ հստակորեն են ձևակերպված ուսումնասիրության առարկան, գիտական նորույթը: Առաջադրված նպատակն ու խնդիրներն իրենց լուծումներն են ստացել ատենախոսության առանձին գլուխներում, կատարվել են խնդիրներից բխող եզրահանգումներ: Տպագրված հոդվածները լուսաբանում են ատենախոսության մեջ արտացոլված հիմնական դրույթները: Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Անշուշտ, ներկայացված ատենախոսությունը հավակնություն չունի լուծելու հայ թարգմանական գրականության, փոխադրությունների ու ինքնուրույն երկերի փոխազդեցությունների բոլոր հարցերը: Ատենախոսը հնարավորինս համակարգված ներկայացրել է նյութը, օգտագործել է հարուստ գրականություն: Իհարկե, այն կարելի էր լրացնել նոր աղբյուրներով, ինչպես, օրինակ, Ալբերտ Մակարյանի, Աստղիկ Մոդոյանի (համահեղինակներ) մենագրությունը, որտեղ գիտական շրջանառության մեջ են դրվել նաև Պարոնյանի թարգմանությունները «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում, որի մասին խոսվում է հպանցիկ: Գիրքն օգտակար կլինե՞ր նաև առաջադրված խնդիրների շրջանակում՝ կառուցվածքային, ժանրային առանձնահատկություններ, տարիքային թիրախներ, գրական աղերսներ ու գեղարվեստական հատկանիշներ, գեղագիտական արժեքաբանություն, որոնք ևս որոշակի չափով եղել են ատենախոսի քննության տիրույթում:

Նկատվում են սակավաթիվ վրիպակներ, որոնք տեխնիկական բնույթի են և դուրին ուղղելի:

Կարծում ենք՝ Վարդուհի Բալոյանի ատենախոսությունը հենք կդառնա՝ հետագայում առավել խորությամբ ուսումնասիրելու թարգմանված տեքստերի ազգային բովանդակությունը, միջավայրին ու ժամանակի պահանջներին համահունչ մշակված լինելու հանգամանքները (թարգմանական նյութերի ընտրությունը բոլոր դարաշրջաններում ու ժամանակահատվածներում բխել է հայ հոգևոր մշակույթի ներքին պահանջներից):

Այսպիսով՝ ներկայացված ատենախոսությունը՝ «19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (Անգլիալեզու թարգմանությունների նյութերի հիման վրա)», համապատասխանում է Ժ.01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականություն» թվանիշին, կատարված է գիտական աստիճանավորման կանոնակարգի պահանջներին համապատասխան, ուստի միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդին՝ Վարդուհի Աշոտի Բալոյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

 Հերիքնագ Ռոսկանյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
19.01.2026